

ԿԱՐԱՊԵՏ ՄԻՍՅՆԱԽՈՐ. — Մբ. ձեռագիր Խորհրդատեսք մը ընդօրինակուած է Կարապետ միայնաւորին ձեռքով Ս. Յակոբի մէջ Գրիգոր Պարոնտէր պտրք. ի խնդրանքով. 1666 ին ալ Եղիազար պտրք. ի օրով գրուած է նոյն ձեռագրին յիշատակարանը, որուն ընդօրինակութիւնը կը գնենք հոս.

«ով բաղձալի իմ սիրական.

ձեռամբ յոգնամեղ միայնաւորին

պիտակ անուն Կարապետին.

եւ ստացողի կտակարանիս,

Գրիգոր ձայնեալ Պարոնտէրին:

՚ի Հայրապետութեան Սուրբ Սաղիմայ

եղիազար Սրբազանին,

յետ ծննդեան մեսիային

հազար վեշտասան որ անցին

վեց հարիւրեակ երկ ընդ քառին (= 1666).

Փակեալ եղև ներկայս ամէն»: (Քեչ, Յուգ. անտիպ. թ. 365):

ԿԱՐԱՊԵՏ ՄՈՒԹԱՅԵԱՆ, ՊՈՂՍԵՑԻ. — Քրձ. 1902 ին կը վախճանի եւ յօգուտ Ս. Յակոբի վանքին կը թողու իբր կալուած մէկ յարկաբաժին՝ Երուսաղէմի մէջ:

ԿԱՐԱՊԵՏ ՆԻԿՈՄԻԴՍՅԻ. — Աւագ քարգնակ Ս. Յակոբի վանքին (1821-23). իր ծախքով կառուցած է Գարդարասան Մուսլըխը եւ Մոմատան քովի փոքր քարուկիր սենեակը. կը գնենք հոս երկուքին ալ յիշատակարանները. «ի Պատրիարքութեան առն. Գարբիէլի Սրբազան վեհին մուսլուխս շինեցաւ վասն պարտէգիս արդեամբ իցնիմիտցի տիրացու մհտ. Կարապետին, 1821 ՌՄՀ»:

«վայելուչ սենեակս ի հիմանց կազմի.

ի պատրիարքութեան Գարբիէլ վեհի.

նպաստիւք ջանից աւագ թարգմանի

նիկոմիդացի պարոն Կարապետի,

ամհբ» (= 1823):

ԿԱՐԱՊԵՏ (ՄՀՏ.) ՇԱՀՎԷՔԻԼԵԱՆ կամ ՓԱՓԱԶ ՕՂԼՈՒ, ԷՕՏԷՄԻՇՅԻ. — 1821 ին գործակալ գանձապետ Ս. Յակոբի վանքին: Նոյն թուականին վանքին կը նուիրէ Զմիւռնիոյ Ն. Կիրակոս